

**ՆԱԶԵԼԻ ՀԱՆՎԵՐԴՅԱԼ**, հ. գ. թ.  
Գորիսի պետական համալսարան,  
Ընդհանուր մանկավարժության  
և հատուկ կրթության ամբիոնի դոցենտ

**ԱԿ. ԲԱԿՈՒՆՅԻ «ՄԹՆԱՁՈՐԻ «ՉԱՐՔԸ»  
ՊԱՏՄՎԱԾՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Բանալի բառեր** - ազգային ավանդույթներ, բարոյական արժեքներ, բարության խորհրդանիշ, ներաշխարհ, հոգեվիճակ, հայրենի երկիր, հոգեբանական վախ, երևակայական աշխարհ, բարենպաստ ընտանիք, վարքային փոփոխություն:

*Բակունցը, ճշմարտությամբ տալով հայ գյուղի կյանքը, հայ աշխատավոր գյուղացու հոգեբանությունն ու ձգտումները, ուժգնորեն սիրելով նրան և ապրելով նրա ճակատագրով, ինքն էլ իր այդ սիրելի հերոսների, հայ գեղջուկների կողքին, նրանց աչքերով է տեսնում ու նկարագրում մարդկանց, իրերը, բնությունը<sup>1</sup>*

Ռաֆայել Իշխանյան

Հայ դասական գրականության մեջ իր և ինքնատիպ պատմվածքներով նոր էջ է բացել Ակսել Բակունցը: Մեծանուն գրողը հայ գրականությունը հարստացրել է պատմվածքների և վիպակների բացառիկ նմուշներով, որտեղ ազգային մտածողությունն արտահայտող ուրույն ոճով, գեղարվեստական մեծ վարպետությամբ ու հիացմունքով պատկերված են հայրենի չքնաղ բնությունը, գյուղական անկեղծ ու ազնիվ միջավայրը, հայ գյուղացու պարզությունն ու հոգու նկատելի գեղեցկությունը, աշխատավոր մարդու հոգեկան արժեքներն ու բարոյական արժանիքները: «Մթնաձորի «չարքը» պատմվածքում Բակունցը ներկայացնում է գյուղական միջավայրը՝ բարոյահոգեբանական վայրիվերումներով, մարդու ներաշխարհի, ճակատագրի հանդեպ ունեցած մտահոգություններ:

<sup>1</sup> Սահակյան Վ., Ներսիսյան Ռ., Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին, Երևան, 2005, էջ 103:

րով: Պատմվածքում ներկայացվում են ազգային ոգու կերտվածքը, փիլիսոփայությունը: Նա իր կերպարների միջոցով ցույց է տալիս ազգային ավանդույթներն ու սովորույթները, վեհ բարոյականությունն ու բարեսիրտ հաստիարակությունը, փորձում նրանց վարքն ու բարքը համադրել նոր կազմավորվող սոցիալ-հասարակական և քաղաքական հարաբերությունների բարոյահոգեբանական մթնոլորտի հետ, որոնք երբեմն խեղաթյուրում ու ախտահարում են իր հերոսների պատկերացումները: Ինչպես մնացած պատմվածքներում, այնպես էլ «Մթնաձորի «չարքը» պատմվածքում Բակունցն իր ասելիքը սկսում է սքանչելի գյուղական պատկերի նկարագրությամբ և հոգեբանական բազմապիսի տարրեր պարունակող զրույցներով: Գրողն իր ակտիվ երևակայության շնորհիվ կարողանում է ներթափանցել իր հերոսների ներաշխարհը, ունենալ այն ապրումներն ու հույզերը, որոնք պարտում են նրանցից յուրաքանչյուրին:

Ինչպես 2. Ավետիսյանն է նշում. «Գեղարվեստական երևակայությունն ունի մի շարք գործուն հոգեբանական հնարքներ, որոնք ամբողջությամբ ենթարկված են հեղինակի կոնստրուկտիվ տրամաբանությանը՝ այն առումով, որ այս հնարանքները դառնում են գեղարվեստական իրականության հոգեբանական զարգացումը պատճառաբանող և ընթացք տվող գործոններ: Այդ հնարքներից են բնության շնչավորումը, բնանկարի ու հերոսի հոգեվիճակի ներդաշնակման ու հակադրման հնարանքը, պատկերի հոգեբանական տեղայնացումը, գեղարվեստական իրականության սիմվոլացումն ու պայմանականությունը»<sup>2</sup>: Հենց վերոնշյալ գեղարվեստական երևակայության շնորհիվ է, որ Բակունցը կերտում է նոր կերպարներ, ստեղծում նոր պատկերներ, որոնցում դրսևորվում են հեղինակի հայացքներն ու համոզմունքները, արժեհամակարգը և սոցիալական կողմնորոշումները: Ինչպես նշում է անվանի հոգեբան Ա. Նալչաջյանը, գրական հերոսների կերպարներ ստեղծելիս, կարևորագույն դեր է խաղում մարդկային բարձրագույն ընդունակություններից մեկը, որին հոգեբանները տվել են էմպաթիա անվանումը<sup>3</sup>: Դա ուրիշի հոգեվիճակի մեջ ներթափանցելու, իրադրությունը նրա դիր-

<sup>2</sup> Ավետիսյան 2., Գրական ստեղծագործության հոգեբանություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 39:

<sup>3</sup> Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան» հրատարակչություն, Երևան 1997, էջ 322:

քերից տեսնելու, կարեկցելու, ապրումակցում ունենալու ընդունակությունն է, որը մեծ նշանակություն ունի ամենօրյա մարդկային փոխհարաբերություններում: Եմպաթիան հանգեցնում է հերոսի դերի ընդունմանն ու նրա հետ գրողի հոգեբանական նույնացմանը կամ իդենտիֆիկացիայի: Այդ ամենը կատարվում է երևակայության մեջ, պատկերավոր հոգեկան գործընթացների ակտիվ մասնակցությամբ: Այդ ամենին հրաշալի վարպետությամբ և խորաթափանց նրբությամբ տիրապետում էր Բակունցը: Հաճախ մի հատիկ բառով կամ բանակապակցությամբ, մի փոքրիկ բնութագրմամբ գրական կերպարի մեջ բացահայտվում է իր կամ ուրիշի սեփականության հանդեպ վերաբերմունքն ու դիրքորոշումը, քաղաքում և գյուղում ապրող մարդկանց մտածելակերպի և հոգեբանության տարբերությունը:

— *Ի՞նչ էլ անխիղճ մարդ են, ենիշումն (վայրեջք) էլ ծի կեստե՞ն:*

— *Ձին իրենցը լիներ, Նստիլ չէին... <sup>4</sup>*

Բակունցն իր խոսքով փորձում է թափանցել բնության հյուսվածքներից ներս, ուր կյանքի խորհրդավոր բնագոյներն ու մղումներն են: Պատմվածքի խորքային շերտերում մենք բախվում ենք «կոլեկտիվ անգիտակցականի» գաղափարին, որն ըստ Կ. Յունգի, իր մեջ ներառում է անհատի կոնֆլիկտներն ու հիշողությունները, որոնք ինչ-որ ժամանակ գիտակցվել են, բայց այժմ ճնշված են կամ մոռացված: Կ. Յունգը, Չ. Ֆրոյդի ստեղծած հիմքերի վրա զարգացրեց այդ հիմնադրույթը և ընդգծեց, որ անհատական անգիտակցականն իր մեջ ունի համակարգեր կամ հուզականորեն լիցքավորված մտքեր, զգացմունքներ և հիշողություններ, որոնք դուրս են հանվել անհատի կողմից իր կամ ցեղի ժառանգական փորձից: Կոլեկտիվ անգիտակցականն անգիտակցականի առավել խորքում գտնվող շերտն է, «անձի կորիզը», որն ազդում է նրա վարքի և ըմբռնումների վրա՝ դրսևորվելով արվեստագետի աշխատանքում: Կոլեկտիվ անգիտակցականի բովանդակություններով են պայմանավորված այն խոր ապրումները, որ մենք ժամանակ առ ժամանակ ունենում ենք արվեստի գործերն ընկալելիս<sup>5</sup>:

<sup>4</sup> Բակունց Ա., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ 106:

<sup>5</sup> Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան» հրատարակչություն, Երևան 1997, էջ 390:

— Սաքա՛ն, դու կիմանաս, հըմի նրանց մեջ մի բան չի պատահե՞լ, որ էն անմարդ ձորերով, սարերով մենակ գալիս են, — դարձավ ծերը Սաքանին և ծիծաղեց:

— Դե ջահել են, առանց էդ չի... <sup>6</sup>

Պատմվածքում բախվում ենք նաև հոգեբանական վախերի կամ ֆոբիաների դրսևորման գաղափարին: Դրանք կաշուն մտքեր են, որոնք հիմնականում առաջանում են հարուստ երևակայություն և բարձր հուզականություն ունեցող մարդկանց մոտ, քանի որ նրանց համար իրական վտանգն անիրականից տարբերելը փոքր-ինչ դժվար է, ինչպես պատմվածքի ծերունու մոտ, երբ նա իր համազյուղացիներին պատմում է ձորերի տեսիլքների, չարքերի և իրեն մշտապես հետապնդող վախերի մասին: Այլևորի խառնիխուռն մտապատկերների մեջ իրար են բախվում բնությունը, լուսնյակ գիշերը, ձորերի արջը և բազում չարքերը:

— Հա՛, էդ ժամանակ էլ, — շարունակեց ծերունին իր պատմությունը, — ձորում շատ վախ կար: Ա՛յ տղա, դուրս եկա Մթնածորի գլուխը, աչքիս մի շողք երևաց: Լուսնյակ էլ գիշեր էր... Հըմի ոչ շողքն ա հեռանում, ոչ էլ ես եմ կարում ետ դառնալ: Ասում եմ արջ ա, ինձ հլա չի տեսել: Մին էլ... <sup>7</sup> կամ

— Ես վազում եմ, ինքը իմ ետևից, կանգնում եմ, նա էլ է կանգնում: Եվ ի՞նչ չարք ա, ի՞նչ հնարք ա... կռացա, որ քար վեր ունեմ...<sup>8</sup>

Նրա բոցավառված երևակայությունը նորանոր տեսիլքներ է կուտակում ասածների վրա, երբ աչքն ընկնում է դիմացի ճամփին և հեռվից լսում է ձիու ոտնածայն: Նոր տեսիլքի բացահայտումից խուճապի ենթարկված ծերունին թեև շարունակում է Մթնածորի լուսնյակի ու արջերի պատմությունը, սակայն իր իսկ պատմելու ընթացքի մեջ երևում է նրա շփոթմունքն ու հուզմունքը նորի մուտքի հանդեպ: Բնության տեսիլքները մղվում են ետին պլան: Նոր սուբյեկտի հանդեպ հետաքրքրությունն ու նոր իրողությունից շփոթվածությունը նկատվում է նաև Սաքանի մոտ, որը Բակունցը ներկայացնում է հետևյալ տողերում. «Եթե գիշերով մեկը հանդիպեր Սաքանին, կնկատեր, որ քթոցը թարս է շալակել»<sup>9</sup>:

<sup>6</sup> Բակունց Ա., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան-1986, էջ 106:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում էջ 107:

<sup>9</sup> Բակունց Ա., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան-1986, էջ 108:

Իրողությունն է այն փաստը, որ հայ կնոջ, մոր կերպարը հանդիսանում է ընտանիքի խաղաղության ու բարության խորհրդանիշ, ընտանիքի կայունությունն ու համերաշխությունն ապահովող հենասյուն, ընտանիքի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտն ապահովող: Այդ մասին են վկայում Բակունցի հետևյալ տողերը .

*Սաքանը չկարողացավ էլ իր դժգոհությունը հայտնել կնոջ բացակա լինելու առթիվ: Բայց մայրը հասկացավ նրան և ասաց.*

— Ախր էսօր օրը չէր...<sup>10</sup>

Պատմվածքում հրաշալիորեն նկարագրված են հին ու Նոր հոգեբանությունների անձայն բախումները, որոնք բացահայտում են բնաշխարհիկ մարդու մտածելակերպի ուղղվածությունը, փիլիսոփայական ակունքները, կերպարի անձնային որակները, խառնվածքի և բնավորության առանձնահատկություններն ու շեշտվածությունը: Ինչպես ներկայացրել է Բակունցը. «Մթնածորը մի ուրույն աշխարհ է, քիչ է ասել կուսական ու վայրի՝ իր բարձր սարերով, արահետներով, թավուտ անտառներով, դաշտերով ու այգիներով»<sup>11</sup>: Այդ Նույն նկարագրությունը վերաբերում է նաև գյուղում ապրող ու արարող մարդկանց՝ հասարակ, պարզ, միամիտ, բարի, ուժքեր կյանքի ու աշխարհի մասին ունեցած իրենց պատկերացումները սահմանափակում են միայն Մթնածորով:

Կարծրատիպային հնի և անսպասելի Նորի «հանդիպումը» երկատում է պատմվածքի հերոսի հոգեկան աշխարհը՝ խախտելով ներդաշնակությունը, բաժանելով միանգամայն հակադիր բևեռների, մեկին տրամադրելով մյուսի դեմ տվյալ դեպքում արդեն զուգահեռներ անցկացնելով սեփական կնոջ և քաղաքից անսպասելիորեն հայտնված կնոջ միջև, որոնք երևում են հեղինակի հետևյալ տողերում. «Ասյան լավաշի բարակ կտորները ոլորում էր, կծոտում մի քանի անգամ և ծամում, հետո աննկատ կուլ տալիս: Երբ որ Սաքանի կինը երեխան տեղավորեց և մոտեցավ սեղանին, սկսեց ուտել, — Սաքանին այնպես թվաց, թե իր կինը որոճում է պառավ կովի պես, հացը շաղախում թքի հետ և կուլ տալիս էլ վիզը մի քիչ երկարում»...<sup>12</sup> կամ «Երբ անցավ նա անկողնի մոտով դե-

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>12</sup> Բակունց Ա., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան-1986, էջ 110:

պի սենյակի մյուս անկյունը, ուր իր տեղաշորն էր և երեխայի օրորոցը, քթով դուրեկան մի հոտ ընկավ, կասես մեկը քաղել էր սարի ծաղիկները, սեղմել, հյուլթը հանել և ջրի պես շաղ տվել քուրսուն, հատակին, ծխից սևացած օճորքին»<sup>13</sup> կամ Սաքանի քթովն ընկավ կնոջ բերանից մի ծանր հոտ, թվաց, թե նրա ատամները ժանգոտել ու փտել էին: Դարձավ մյուս կողքին, երեսը դեպի պատը և ինքն էլ զարմացավ, թե ինչպես մինչ այդ չի զգացել կնոջ բերանի հոտը<sup>14</sup>: «Քաղաքակրթության լրատուն» տակն ու վրա է անում նրա հոգեկան աշխարհը, ցրում մթնաձորի դիցաբանական պատկերացումները, և Սաքանին կանգնեցնում Մթնաձորի նորակերպման իրողության առջև: Խաթարվում է գյուղացու ներքին անդորրը և կյանքը դուրս է գալիս իր բնականոն հունից. «Երազում Սաքանի աչքին երևաց Մթնաձորը. սպիտակ շոր հագած մի կին ձորով վազում էր իր հետևից, մոտենում էր, որ բռնի, կանգնում էր կինը, ծիծաղելով ետ փախչում ձորն ի վեր»<sup>15</sup>:

Հետաքրքիր էր տեսնել Սաքանի վարքային դրսևորման փոփոխությունները, հասկանալ Սաքանի մտածմունքներն իր կնոջ և Ասյայի մասին. ամեն անգամ Սաքանը Ասյային համեմատում էր իր կնոջ հետ ու ամեն անգամ թերութուններ էր գտնում: Նրա հայտնվելուց հետո Սաքանը սկսեց այնպիսի բաներ նկատել կնոջ արտաքինի, պահվածքի մեջ, որ մինչ այդ չէր նկատել:

Ասյան միանգամայն տարբերվում էր պարզ, միամիտ, խեղճուկրակ, առավոտից իրիկուն իրենց ամուսինների հետ առօրյա հոգսերով ու գյուղացուն բնորոշ չարքաշ աշխատանքով իրենց օրվա հացը վաստակող գյուղացի կանանցից՝ իր խելքով, հագուկապով, վերաբերմունքով: Նա իր կրթվածությամբ, վարք ու բարքով, խնամված արտաքինով հետաքրքրություն է առաջացնում Սաքանի մոտ, որովհետև Ասյան իբրև կին հայտնություն էր Սաքանի համար: Այստեղ բախվում են երկու կողմեր՝ գյուղի և քաղաքի կանանց հոգեբանորեն հակադրելի պատկերները՝ նպատակ ունենալով նրանց միջոցով ներկայացնել գյուղի կանանց կաշկանդված, հոգեբանորեն ճնշված մտածելակերպը և քաղաքի կանանց ազատատենչ գաղափարներն ու լուսավորությունը:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 115:

Դժվար չէ կռահել, թե հոգեբանորեն որքան ծանր ապրումներ է ունենում Սաքանն Ասյային ճանապարհելու և գյուղից հեռանալու փաստից. «Սաքանը մի պահ մնաց տեղում կանգնած, հետո մոտեցավ գոմի դռան, բայց հիշեց, որ գնալիք տեղը այգին է, ետ դարձավ, իջավ ձորը: Երբ որ նա Ասյային օգնեց ձին նստելու և ոտքը պահեց, նրան այնպես թվաց, թե մատները խրվեցին մի փափուկ բանի մեջ: Երբ կռացավ, ոտքն ասպանդակի մեջ դնելու, Ասյայի զգեստի տուևը բարձրացավ, և Սաքանի աչքին ընկավ նրա սպիտակ շորը: Ամբողջ օրը այգում ջուր արեց Սաքանը»<sup>16</sup>:

Այդ օրը նա շատ մռայլ տրամադրություն և ծանր ապրումներ էր ունեցել: Եվ երբ պառկեց քնելու, «Երբ գլուխը դրեց բարձին, Սաքանը նորից զգաց այն հոտը, որ Ասյայի շորերից էր գալիս: Երեկ այդ բարձը նրա գլխատակին էր: Սաքանը գլուխը թաղեց բարձի մեջ, լայնացած ռունգերով և խոր սկսեց շնչել: Նրա աչքի առաջ օրորվում էին ուսը, մի սպիտակ շոր, փափուկ ոտքերը: Վերմակի տակ դուրեկան հոտ կար, և, երբ Սաքանը գրկեց իր կնոջ, նրան այնպես թվաց, թե իր կնոջ ուսն էլ բաց է, հագին ձյունի պես սպիտակ շապիկ ունի: Կինը չհասկացավ, թե ինչու այդ գիշեր Սաքանը այդքան մոլեգին է»<sup>17</sup>, իր պարզ հոգեբանությամբ և նախվ մտածելակերպով պատկերացում անգամ չունենալով, որ Սաքանն այդ պահին սավառնում էր իր իսկ ստեղծած, միայն իրեն պատկանող հեքիաթային, երևակայական աշխարհում իր ապրումների, զգացողությունների ու վայելքների հետ...

Դրանից հետո Սաքանին անընդհատ հետապնդում էր քաղաքից եկած Ասյայի սպիտակ բլուզը, որը երբեմն դառնում է շրջազգեստ, շապիկ և անգամ ամպի տեսքով հալածում է Սաքանին. «Սաքանը ունքերի տակից Ասյային էր նայում, նրա սպիտակ բլուզին...», կամ «Անկողնու մոտ նրա շորերն էր, միջին սպիտակ շրջազգեստը...», «Ջրի երեսին օրորվում էր մի սպիտակ շոր», «Ասյայի մոտով անցնելիս նա տեսավ սպիտակ շորը»<sup>18</sup>:

Այսքանից հետո մտում է եկթադրել, որ «Մթնածորի «չարքը» հենց Ասյան էր...

Բարդ է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ հայ արձա-

<sup>16</sup> Բակունց Ա., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ 113:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 109, 111, 112:

կը, եթե չլիներ Ակսել Բակունցի գրական ժառանգությունը: Հայ գրականության մեջ Բակունցի ինքնատիպությունն այն է, որ նա իր ստեղծագործությունները պատկերեց այնպիսի նրբությամբ ու քնքշությամբ, ում մասին Ավ. Իսահակյանն ասել է. «Հայաստանում կա մի գրող, որի բառերը գրնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են սարյանական կտավների գույներով: Դա Ակսել Բակունցն է»<sup>19</sup>:

**NAZELI HAKHVERDYAN - PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE STORY OF AK. BAKUNTS "THE MYSTERY OF" MTNADZOR**: The psychological analysis of the story of "The Evil of Mtnadzor" by Bakunts allowed to prove how deep Bakunts' affiliation is to his native land, where lives and creates an honest person who respects and preserves national traditions, with his unique psychology, to face or compel the unexpected reality understanding of adaptability. He is able to penetrate into the inner world of every literary character with his own skill and elegance, to feel his emotions, feelings, emotions, and to prepossess the reader the same way .

**Key words:** national traditions, moral value, symbol of kindness, inner world, mental state, native country, psychological fear, imaginary world, favorable family, behavioral change.

**НАЗЕЛИ АХВЕРДЯН - ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ РАССКАЗА АК. БАКУНЦА "МИСТИКА" МТНАДЗОРА**: Психологический анализ рассказа Ак. Бакунца «Мистика» Мтнадзора» доказал настолько глубоко Бакунц связан с его замечательной родной землей, где живет честный человек, который создает и сохраняет национальные традиции, с его уникальной психологией, чтобы противостоять или адаптироваться неожиданной новой действительности. Он способен проникнуть во внутренний мир каждого литературного персонажа со своим мастерством и тонкостью, чувствовать его эмоции, чувства, душевное состояние и заражать читателя таким же образом.

**Ключевые слова:** национальные традиции, моральная ценность , символ добра, внутренний мир, психическое состояние, родная страна, психологический страх, воображаемый мир, благоприятная семья, изменение поведения.

<sup>19</sup> Սահակյան Վ., Ներսիսյան Ռ., Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին, Երևան, 2005, էջ 103:



## Referense

1. Avetisyan Z. grakan stextsagorsutyanyan hogebanutun, Yerevan, EPH hrat, 2012.
2. Bakunc A., Erker, «Sov. grox», Yerevan, 1986 (in Armenian).
3. Nalchagyan A., Hogebanutyan himuncner, «Hogeban» hrat., Yerevan, 1992 (in Armenian).